


593

ՀԵՂԱՓՈՒՈՒԹՅԱՆ ՅԵՐԳԻԶ

1834



970R



Հ Ա Կ Ո Ր Հ Ա Կ Ո Ր Յ Ա Ն Ի
ՅԵՐԵՆԱՄՅԱ ԳՈՐԾՆԵՈՒԹՅԱՆ

ՊԱՏՎԻ ՈՐ

ՅԵՂԱՓՈՒՈՒԹՅՈՒՆ

Տեսնի ես, ընկեր, ալեկոծու՛մը ա՛նկող ուկյանի,
Ուր յերկու ալիք շարժուն սարի պես իրար են վազում,
Իրար են վազում փրփուրը բերնին հովազի նման,
Ու հոխորատով գարնվում, փշրվում ամպի նման...
Իսկ յերբ անցնում ե վրեժի բուպեն—հուզումը վայրի,
Տեսնի ես ինչպես հանգստանում ե հսկան ջրերի,
Մեղանում ե նա... մանուկի նման ժպտում ե ալիք,
Ալիքի միջից մի յերգ անման, ծփալով մեղմիկ—
չոյում լսելիք...

Լսնի ես, ընկեր, ըմբոսս յերկնքում կոչը վորդաի,
Վոր դղրդում ե վորպես մի պայթյուն մեծ թնդանոթի.
Տեսնի ես, ինչպես ամպերի կրծքին կայծակը զիզ-զազ,
Իր լիցն ե մխում փութկոտ, շեշտակի ու ցնցում աշխարհ.
Կամ ինչպես թափով ծառս-ծառս ե լինում ցառկոտ փոթորիկ,
Հսկա ծառերին շոքե-շոք անում—դարձնում խաղալիք,
Մինչ վոր տեղում ե հեղեղը վայրագ ե ինչպես փրկանք՝
Ծառը յեկունքից ազատում աշխարհ.
Բնությունը հաղթ ժպտում ե ապա պայծառ արեղին—
Վորպես պատասխան չար արհավիրքին...

Լսնի ես, ընկեր, հսկանի ճիշը հուսահատ,
Վոր զալարվելով, արդանդի ցավից պոռա անընդհատ...
Վիրավոր բնկած այն եզ տոյունձն ե այնպես մռնչում,
Յերկունքի ժամին մեծ ազատության ողնուլթյան կանչում.
Կյանքի ե մահու պայքարը մղող այն մայրն ե տանջվող...
Իսկ երբ հանապա՛հ ե հուտո բաղդավոր ժամը փրկավետ,
Տեսնի ես ինչպես այդ խորհրդավոր վե՛հ պայթումից յետ,
Մի վտեմ, խաղաղ մայրական ժպիտ, վորպես վառ հանկինթ,
Փայլում ե նրա արնոտ շուրթերում—
դեմքը զարդարում:

Ելդպես եր ահա ե այն վե՛հ ժամին Հեղափոխության,
Յերբ վոր բաղլավեցին իրար հակառակ յերկու ախոյան.
Ալիքի նման խուլ մռնչացին յերկու հզոր ույժ,
Աշխարհը ցնցվեց... ու յեղան կործան կարգերը վատույժ.
Վայրագ հեղեղին, շանթ ու փոթորկին,
Հետեց թափով հեղեղ ցնծուլթյան,
Յերկունքի միջից մանուկը ծնվեց Մեծ Ազատության.
Ընկեր իմ, ընկեր, ահա մանուկը Հեղափոխության.
Փորձություն ժամին յերդվիր կրծքովդ պաշտպանել նրան:

ԱՄԲՈՒՆ — ԻՄ ԱՇԽԱՐՔԸ

Վորքան ել ուզեմ ձգտել դեպի ձեզ,
Վեհապանծ սարեր,
Ու փարվել մաքուր ձեր ձյունյա կրծքին,
Վորքան ուզեմ յես,
Սլանալ վեր, վեր,
Արծիվի նման հպարտ սավառնել՝
Ելի՛ շեմ կարող, կուսական լեռներ,
Յերկիրը թողնել,
Վոր խարխափում ե կեղտ ու մուրի մեջ,
Տառապում անվերջ,
Յեզ յես կարեքի աշխարհն յեմ ընարում—
ձնշված ու վրված,
Ուր վիշտ ու զրկանքն իրար հետ գրկված՝
Մի յեկը են փնտրում:

Յեզ դուք, վառ աստղեր,
Վորքան ել դյուլթող,
Միրաբ պարուրող լինի ձեր հմայք,
Վորքան ել դերեք հողիս յերազող,
Ու ինձ յերկնային տանեք ձեր աշխարհ՝
Դարձյալ շեմ կարող.
Կապված եմ կամա իմ մայր հողի հետ.
Հայր ու հաբատե ամբոխի լացը,
Ցավ ու կսկիծը,
Ինձ կոչ են անում, թե՛ արի՛, պոյե՛տ,
Մեր վիշտը լացիլը,
Մեզ ընկեր զարձիր:

Ո՛ր, ինչպես քաղցր ե յերկիրն քվերանալ,
Վիշտ, հոգս մոռանալ,
Լուսնի փայլի մեջ լողալ, սավառնել,
Աստղերը զրկել,
Բայց ե անողոք իրականության,
Ուրվականը սե,
Վորպես մի ժանտ դե,
Մարմնացած ըմբոսս բողբոջի նման—
Տալիս ե հրաման.
Իջի՛ր յերազկոտ յերկնային գահից,
Կյանքին մոտնալու,
Նրան յերգ ունիս, վերք ունիս տալու:
Ու պիտի իջնեմ... Ամբոխից փախ տալ,
Դժվար ե, դժվար.

976

Հոգիս ձուլված և նրա հոգու մեջ,
Ջրերս կապված նրա ջրերին,

Մի այլ ճանապարհ

Գոյություն չունի յերբեք ինձ համար:
Յե՛վ վորքան գոյութող լինի ձեր հմայք,

Յերկիրն ու աստղեր,

Կա՛ մի քրտնալի, կարիքի աշխարհ—

Ճնշված ու լքված՝

Նրան եմ ընտրում,

Այնտեղ վիշտ, զրկանք իրար հետ զրկված՝

Մի յերբ են փնտրում...

1905 թ.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԵՐԳԸ

Մի յերգ գիտեմ յես աննման—
Հզոր մուրճի թափի նման,
Ղարտաի պես հատու, խրճխտ,
Մի յերգ գիտեմ յես աննման:

Մտունդ առել, ջիղ ու արյուն՝
Բանուկ, ուժեղ բազուկներից.
Գործարանը խանդ ու ավյուն,
Ճնշել նրան իր ժխտրից:

Ծնվել և նա մութ հանքերի,
Մետեղակուռ յերակներից,
Ու ձայն առել քլունգների,
Ցասկտ ու շեշտ հնար-զարկերից:

Հմայք ունի յերգս այնպես,
Հոգսի ժամին թե վոր յերգես՝
Թախիծ ու վիշտ կշքանա—
Լքված հոգուն նեցուկ և նա:

Հե՛յ, իմ յերգը միշտ աննման—
Հզոր մուրճի թափի նման,
Ղարտաի պես հատու, խրճխտ
Մի յերգ գիտեմ ես աննման:

1910 թ.

Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Չ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Յ Ե Ր Կ Ա Ն 1923

Պետհրատի II տպարան, Յերևան: